ՓՈՐՁՆԱԿՆԵՐ ԵՎ ՖԵԼՈՈՒՆԵՐ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼՈՒ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագիրը Եվրոպական միության և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նախաձեռնություն է, որն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստանի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»–ի հետ համատեղ:

Ծրագիրը մեկնարկել է 2023թ.-ի մարտից և ընդհանուր նպատակն է խթանել երիտասարդների մասնակցությունը կրթության, քաղաքացիական հասարակության և քաղաքականության մեջ: Ծրագրի հատուկ նպատակն է հզորացնել և կրթել երիտասարդներին և երիտասարդական ՀԿ-ներին՝ խրախուսելով նրանց ակտիվ մասնակցությունը Հայաստանի քաղաքացիական և հասարակական կյանքում:

ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Մրցույթի նպատակները և ակնկալվող արդյունքները.

Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը (Հիմնադրամ) և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնը» (ԵՆԿ) հրավիրում են շահագրգիռ հասարակական և ոչ հասարակական կազմակերպություններին դիմելու Հայաստանի 6 մարզերի՝ **Արմավիրի, Տավուշի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Գեղարքունիքի**, իրենց կառույցներում փորձնակների և ֆելոուների հյուրընկալելու համար:

Հյուրընկալող կազմակերպությունները հնարավորություն կունենան զարգացնել իրենց կարողությունները և իրականացնել կարևոր ծրագրեր, ստանալ նորարարական

գաղափարներ և հեռանկարներ, ինչպես նաև, նպաստել ապագա առաջնորդների մասնագիտական առաջընթացին: Փորձնակները և Ֆելոուները հնարավորություն կունենան ձեռք բերել մասնագիտական փորձառություն և ստանալ ուղղորդում ոլորտային փորձագետների կողմից:

Փորձնակները և Ֆելոուները ընտրվելու են բաց մրցույթի միջոցով: Հետևաբար, հյուրընկալող կազմակերպություններին և փորձնակներին/ֆելոուներին իրար հետ կապելու համար իրականացվելու է քարտեզագրում՝ հաշվի առնելով մասնագիտական առանձնահատկությունները և փորձառությունները:

Մրցույթի նպատակներն են.

- **Հյուրընկալող կազմակերպությունների և երիտասարդ մասնագետների կարողությունների զարգացում.** Առաջնային նպատակն է զարգացնել հյուրընկալող կազմակերպությունների և երիտասարդ մասնագետների կարողությունները Արմավիրի, Տավուշի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում: Այն ներառում է մենթորության և աջակցության տրամադրում հյուրընկալող կազմակերպություններին՝ մշակելու գործողությունների համապարփակ ծրագրեր, որոնց միջոցով կազմակերպությունները հնարավորություն կունենան առաջարկել մենթորություն և ապահովել փորձնակների և ֆելոուների կողմից գործնական հմտությունների ձեռքբերումը: Այս մրցույթը նաև նպատակ ունի հյուրընկալող կազմակերպություններին տրամադրել նորարարական գաղափարներ և թարմ մոտեցումներ՝ հարստացնելու իրենց գործունեության շրջանակը: Հյուրընկալող կազմակերպությունների մենթորության և առաջնորդության շնորհիվ փորձնակները և ֆելոուները հնարավորություն կունենան զարգացնել իրենց մասնագիտական կարողությունները: Այս փորձառությունը կարող է զգալիորեն նպաստել նրանց անձնական և մասնագիտական աճին՝ նրանց աշխատաշուկայում ավելի մրցունակ դարձնելով:
- **Երիտասարդների զորեղացում և մասնակցության խթանում.** Մրցույթի նպատակն է խթանել երիտասարդների բովանդակալից ներգրավվածությանը Հայաստանի հասարակական և ոչ հասարակական ոլորտներում: Այն միտված է երիտասարների զորեղացմանը՝ աշխատանքային փորձառության ձեռք բերման, մասնագիտական հմտություններ զարգացման և հասարակական կյանքում ներգրավված լինելու հնարավորությունների ստեղծման միջոցով:
- **Համագործակցություն.** Այս մրցույթը նպատակ ունի խթանելու համագործակցությունը հյուրընկալող կազմակերպությունների, ծրագրի

գործընկերների, փորձնակների և ֆելոուների միջև: Փորձնակները և ֆելոուները հնարավորություն կունենան համագործակցելու հյուրընկալող կազմակերպությունների մասնագետների հետ՝ կառուցելով արժեքավոր կապեր և ընդլայնելով իրենց մասնագիտական ցանցերը:

Հյուրընկալող կազմակերպությունների դերը.

Հյուրընկալող կազմակերպությունը պետք է մշակի գործողությունների ծրագիր և փորձնակության և ֆելոուշիփի ամբողջ ընթացքում տրամադրի մենթորություն և աջակցություն: Յուրաքանչյուր փորձնակ/ֆելոու պետք է ունենա իր ղեկավարը, ով նաև կլինի հիմնական կոնտակտային անձը: Ղեկավարի ընտրությունը պետք է հիմնված լինի մասնագիտական և աշխատանքային հետաքրքրությունների և փորձառությունների համապատասխանության վրա: Հյուրընկալող կազմակերպությունը պետք է ապահովի շարունակական և կառուցողական ուղղորդում՝ փորձնակների և ֆելոուների կողմից կատարված աշխատանքների, ծրագրերի, հետազոտությունների վերաբերյալ: Հյուրընկալող կազմակերպությունը կուղղորդի փորձնակներին և ֆելոուներին և կապահովի, որ վերջիններս ձեռք բերեն գործնական և մասնագիտական հմտություններ՝՝ միաժամանակ հարթակ ապահովելով այս երիտասարդների համար ակտիվորեն նպաստելու երիտասարդների ապագայի վերակառուցման հավաքական նպատակին:

Ովքեր կարող են դիմել.

- **Դիմող կազմակերպությունը պետք է լինի գրանցված՝ ներկայացնելով հետևյալ ոլորտները.**
  - ✓ **Հանրային ոլորտ. մարզպետարաններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական ոչ առևտրային կազմակերպություններ և այլն:**
  - ✓ **Մասնավոր ոլորտ. բիզնես ընկերություններ, ձեռներեց կազմակերպություններ, մարքենթինգային կազմակերպություններ, SS կազմակերպություններ և այլն:**
  - ✓ **Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ. հասարակական կազմակերպություններ, համայնքային կազմակերպություններ, աղվոկացիոն կառույցներ և այլն:**
- **Պետք է ունենա գործունեության նվազագույնը 3 տարվա փորձ և գործի հետևյալ մարզերում՝ Արմավիր, Տավուշ, Լոռի, Շիրակ, Սյունիք և Գեղարքունիք:**

- **Պետք է ունենա գրասենյակային տարածք, որտեղ փորձնակները և ֆելոուները կարող են աշխատել:**
- **Պետք է նշանակի լրիվ դրույքով ղեկավար կամ մենթոր՝ փորձնակների և ֆելոուների հետ աշխատելու համար:**

<u>Ֆինանսական վարձատրության չափը. փորձնակության և ֆելոուշիփի տևողությունը.</u>

Փորձնակության և ֆելոուշիփի տևողությունը երեք ամիս է՝ 2024թ-ի հուլիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում: Յուրաքանչյուր կազմակերպություն կարող է հյուրընկալել մինչև երկու մասնակցի: Հյուրընկալող կազմակերպությունը կստանա 500 եվրո վարձատրություն յուրաքանչյուր փորձնակի և ֆելոուի հյուրընկալելու համար: Հյուրընկալող կազմակերպությունները կարող են առաջարկ ստանալ հյուրընկալելու փորձնակների/ֆելոուների նաև 2025թ-ին: Ծրագրին մասնակցող երիտասարդ փորձնակները և ֆելոուները կստանան 750 եվրո կրթաթոշակ՝ իրենց 3-ամսյա աշխատանքային գործունեության համար:

<u>Ինչպես դիմել մրցույթին.</u>

Մրցույթին դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

- <u>Հայտադիմում</u> (համաձայն տրամադրված ձևաթղթի)
- <u>Երաշխավորագիր</u> / Declaration of honour (համաձայն տրամադրված ձևաթղթի)
- <u>Գրանցման վկայական</u>
- <u>Կանոնադրություն</u>

Վերոնշյալ փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում հայտը չի կարող դիտարկվել: Ենթադրամաշնորհային մրցույթին դիմելու վերջնաժամկետը **2024թ-ի հունիսի 30-ն է**: Հայտադիմումը անհրաժեշտ է ուղարկել anna.mkrtchyan@kas.de էլ. հասցեին: Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել նույն էլ. հասցեով, կամ զանգահարել +37412545116 հեռախոսահամարով:

ՆՇՈՒՄ

- Ձեռագիր հայտերը չեն ընդունվելու:
- Վերջնաժամկետից հետո ներկայացված հայտերը չեն դիտարկվելու:
- Հայտադիմումները կարող են ներկայացվել հայերեն կամ անգլերեն:
- Տրամադրված տեղեկատվությունը կիրառվելու է բացառապես հայտերի դիտարակման համար և ենթակա չէ տարածման:
- Եթե հայտատուն հայտն ուղարկելուն հաջորդող երկու աշխատանքային օրերի ընթացքում չի ստանում պատասխան նամակ հայտը ստանալու վերաբերյալ, խնդրում ենք գրել հետևյալ էլ. հասցեին՝ anna.mkrtchyan@kas.de, կամ զանգահարել +37412 545116 հեռախոսահամարով:

ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Ենթադրամաշնորհային մրցույթի շրջանակում ներկայացված հայտերը կուսումնասիրվեն և կգնահատվեն ծրագրի ընտրական հանձնաժողովի կողմից՝ մրցույթի վերջնաժամկետին հաջորդող երկշաբաթյա ժամկետում: Ստորև կարող եք ծանոթանալ հյուրընկալող կազմակերպությունների կողմից ներկայացվելիք հայտերի գնահատման չափանիշների աղյուսակին:

1.	**Գործառնական կարողություններ (առավելագույնը՝ 25 միավոր)**
-	Կազմակերպությունն ունի ինստիտուցիոնալ և տեխնիկական կարողություններ՝ փորձնակների և ֆելոուների համար նպաստավոր աշխատանքային պայմաններ ապահովելու համար:
2.	**Համապատասխանություն (առավելագույնը՝ 25 միավոր)**
-	Կազմակերպության գործունեության ոլորտը և պրոֆիլը համապատասխանում են այս մրցույթի նպատակներին:
3.	**Մոտիվացիա (առավելագույնը 20 միավոր)**
-	Կազմակերպությունը մոտիվացված է հյուրընկալելու փորձնակների և/կամ ֆելոուների, ինչպես նաև, պատրաստակամ է նրանց համար տրամադրել մենթորություն և աջակցություն:
4.	**Կայունություն (առավելագույնը 15 միավոր)**
-	Կազմակերպությունը ունի կայուն ռեսուրսներ, ինչը հնարավորություն է տալիս հյուրընկալելու փորձնակների և ֆելոուների՝ նրանց մասնակցության ամբողջ ընթացքում:
5.	**Համագործակցություն (առավելագույնը 15 միավոր)**
-	Կազմակերպությունը պատրաստակամ է համագործակցելու ծրագրային գործընկերների և մասնակիցների հետ՝ նպատակ ունենալով հասնելու հնարավոր լավագույն արդյունքներին:

ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ընդհանուր դրույթներ.

- Հյուրընկալող կազմակերպությունները ստանձնում են փորձնակներին և ֆելոուներին հյուրընկալելու ամբողջական պատասխանատվությունը մասնակցության ամբողջ ժամանակահատվածում:
- Եթե փորձնակների և ֆելոուների մասնակցության արդյունքում ստեղծվում են հաղորդակցական նյութեր, օրինակ՝ հրապարակումներ, հետազոտություններ, հոդվածներ և այլն, հյուրընկալող կազմակերպությունները և մասնակիցները պետք է հետևեն ծրագրի տեսանելիության սկզբունքներին՝ բոլոր հաղորդակցական նյութերը համապատասխանեցնելով «Հաղորդակցության և տեսանելիության» ուղեցույցին:
- Նախքան նախագծի սկզբնական պլանում որևէ փոփոխություն կատարելը, հյուրընկալող կազմակերպությունը պետք է խորհրդակցի և հաստատում ստանա Հիմնադրամի և ԵՆԿ-ի կողմից:
- Եթե ենթադրամաշնորհառուն նախագծի իրականացման ընթացքում չի կատարում ենթադրամաշնորհի նախնական պլանի համաձայն ստանձնած պարտավորությունները, Հիմնադրամը իրավունք ունի պահանջելու ենթադրամաշնորհի գումարի մի մասի կամ ամբողջ չափի փոխհատուցում:
- Ենթադրամաշնորհի մեկ հայտարարության ներքո հայտատուն կարող է ներկայացնել միայն մեկ հայտադիմում:
- ԵՆԿ-ն կուղղորդի հյուրընկալող կազմակերպություններին և փորձնակներին/ֆելոուներին՝ բովանդակային և գործառնական աջակցություն տրամադրելով: Հիմնադրամը և ԵՆԿ-ն կիրականացնեն մշտադիտարկում՝ ապահովելով ծրագրի դրական արդյունքները:
- Հյուրընկալող կազմակերպություններին կարող է առաջարկվել ընդունել փորձնակների և ֆելոուների նաև 2025թ-ին:

Վճարում և փոխհատուցում.

- Հյուրընկալող կազմակերպությունները վարձատրություն կստանան երկու փոխանցումով՝ պայմանագիրը կնքելուց և վերջնական հաշվետվության ներկայացումից հետո:

Հաշվետվողականություն.

- Հյուրընկալող կազմակերպությունները կներկայացնեն վերջնական հաշվետվություն՝ մանրամասն ներկայացնելով փորձնակների և ֆելոուների կողմից կատարված աշխատանքը և արդյունքները:
- Հիմնադրամը և ԵՆԿ-ն կարող են մշտադիտարկման այցելություններ կատարել հյուրընկալող կազմակերպություններ:

ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Փորձնակություն - Փորձնակությունը մասնագիտական ուսուցման փորձառություն է, որը հնարավորություն է տալիս ունենալ բովանդակալից, գործնական աշխատանք՝ կապված անհատի ուսումնասիրության ոլորտի կամ մասնագիտական հետաքրքրության հետ: Փորձնակությունը հնարավորություն է տալիս զարգացնելու մասնագիտական հմտությունները և կարիերայի նոր հեռանկարներ է ստեղծում: Այն գործատուին հնարավորություն է տալիս նոր գաղափարներ և էներգիա բերել աշխատավայր, զարգացնել տաղանդներ և ներուժ:[1]

Ֆելոուշիփ - Ֆելոուշիփը մասնագիտական զարգացմանն ուղղված արժեքավոր հնարավորություն է՝ նախատեսված ինչպես շրջանավարտների, այնպես էլ արդեն փորձառու մասնագետների համար: Այն հնարավորություն է տալիս զարգացնել առաջնորդական հմտություններ, ներգրավվել հետազոտական նախաձեռնություններում կամ իրականացնել նախագծեր ընտրված մասնագիտական տիրույթում:[2]

[1] Career Center: https://careers.umbc.edu/employers/internships/what-is-an-internship/#:~:text=An%20internship%20is%20a%20professional,and%20to%20learn%20new%20skills.
[2] Columbia University: https://urf.columbia.edu/article/what-fellowship